

Հարցաշար

Միջազգային իրավունք դասընթացի պետական քննության

1. Միջազգային իրավունքը՝ որպես ինքնուրույն իրավական համակարգ: Միջազգային հանրային իրավունքի և միջազգային մասնավոր իրավունքի հարաբերակցությունը:
2. Միջազգային և ներպետական իրավունքի հարաբերակցությունը:
3. Հին և անտիկ աշխարհի ժամանակաշրջանի միջազգային իրավունք:
4. Միջին դարերի միջազգային իրավունք:
5. Դասական միջազգային իրավունք:
6. Ժամանակակից միջազգային իրավունքի ձևավորումը և զարգացումը:
7. Միջազգային իրավունքի սուբյեկտի հասկացությունը և տեսակները: Միջազգային իրավունքի սկզբնական և ածանցյալ սուբյեկտներ:
8. Միջազգային իրավունքի աղբյուրների հասկացությունը և տեսակները:
9. Միջազգային իրավունքի նորմերի հասկացությունը, կառուցվածքը և դասակարգումը:
10. Միջազգային իրավունքի նորմերի ստեղծման գործընթացը:
11. Իրենց անկախության համար պայքարող ազգերը և ժողովուրդները՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտ:
12. Պետությունների միջազգային իրավասուբյեկտության բովանդակությունը:
13. Հայաստանի Հանրապետությունը՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտ:
14. Միջազգային կազմակերպությունները՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտ:
15. Միջազգային պայմանագիրը՝ որպես միջազգային իրավունքի գլխավոր և հիմնական աղբյուր:
16. Միջազգային իրավական սովորույթը՝ որպես միջազգային իրավունքի հիմնական աղբյուր:
17. Ճանաչման ինստիտուտը միջազգային իրավունքում: Ճանաչման տեսակները և ձևերը:
18. Պետությունների իրավահաջորդությունը միջազգային պայմանագրերի, պետական սեփականության, պետական պարտքի և պետական արխիվների վերաբերյալ:
19. Պետությունների իրավահաջորդության հասկացությունը և էությունը:
20. Միջազգային իրավունքի հիմնական սկզբունքների հասկացությունը:
21. Ուժ և ուժի սպառնալիք չկիրառելու սկզբունքը:
22. Ազգերի և ժողովուրդների ինքնորոշման և իրավահավասարության սկզբունքը:
23. Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման սկզբունքը:
24. Պետությունների ինքնիշխան հավասարության սկզբունքը:
25. Միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարման սկզբունքը:
26. Տարածքային ամբողջականության սկզբունքի նորմատիվ բովանդակությունը:
27. Միջազգային պայմանագրերի իրավունքի հասկացությունը և աղբյուրները:
28. Միջազգային պայմանագրի հասկացությունը, իրավաբանական բնույթը և տեսակները: Պայմանագրի ձևը (պայմանագրի լեզուն, անվանումը և կառուցվածքը

29. Միջազգային պայմանագրերի կնքման փուլերը: Լիազորություններ:
30. Վերապահումները և հայտարարությունները միջազգային պայմանագրերի վերաբերյալ: Պայմանագրերը և երրորդ պետությունները:
31. Միջազգային պայմանագրերի վավերությունը: Անվավերության տեսակները:
32. Միջազգային պայմանագրերի ուժի մեջ մտնելը: Միջազգային պայմանագրերի գործողությունը ժամանակի մեջ և տարածության վրա:
33. Միջազգային պայմանագրերի մեկնաբանության ձևերը և եղանակները:
34. Միջազգային պայմանագրերի գործողության դադարեցումը:
35. Միջազգային կազմակերպությունների հասկացությունը, դասակարգումը և իրավական բնույթը: Միջազգային կազմակերպությունների կառուցվածքը:
36. Միջազգային կազմակերպությունների հատկանիշները:
37. Միջազգային կազմակերպությունների իրավասությունը: Որոշումների ընդունման ընթացակարգը միջազգային կազմակերպություններում:
38. Միացյալ Ազգերի Կազմակերպություն. նպատակները և գործունեության հիմնական ուղղությունները:
39. ՄԱԿ-ի հիմնական խնդիրները և կառուցվածքը:
40. ՄԱԿ-ի գլխավոր մարմինները:
41. ՄԱԿ-ի մասնագիտացված հաստատությունները:
42. Տարածաշրջանային միջազգային կազմակերպություններ:
43. Միջազգային իրավախախտումների հասկացությունը և դասակարգումը:
44. Միջազգային իրավական պատասխանատվության հասկացությունը և հիմքերը:
45. Միջազգային-իրավական պատասխանատվության սուբյեկտները, ֆիզիկական անձանց միջազգային քրեական պատասխանատվությունը:
46. Պետությունների պատասխանատվության բովանդակությունը, վնասի հատուցման տեսակները և ձևերը:
47. Պատասխանատվությունը ցեղասպանություն միջազգային հանցագործության^a համար:
48. Արտաքին հարաբերությունների ներպետական և արտասահմանյան մարմինների համակարգը:
49. Դիվանագիտական և հյուպատոսական իրավունքի հասկացությունը և աղբյուրները:
50. Դիվանագիտական ներկայացուցչության հասկացությունը և գործառույթները: Դիվանագիտական ներկայացուցչության կազմը:
51. Դիվանագիտական ներկայացուցչության անձնակազմի անձեռնմխելիությունները և արտոնությունները:
52. Դիվանագիտական ներկայացուցչության անձեռնմխելիությունները և արտոնությունները:
53. Դիվանագիտական առաքելության սկիզբը և ավարտը:
54. Հյուպատոսության հիմնարկների տեսակները, գործառույթները և կազմը:
55. Հյուպատոսության հիմնարկների և դրանց պաշտոնատար անձանց արտոնությունները և անձեռնմխելիությունները:
56. Միջազգային տնտեսական իրավունքի ճյուղային սկզբունքները:

57. Միջազգային տնտեսական իրավունքի հասկացությունը և կարգավորման առարկան:
58. Միջազգային ծովային իրավունքի հասկացությունը և աղբյուրները:
59. Դեպի ծով ելք չունեցող պետությունների իրավական վիճակը:
60. Միջազգային ծովային տարածությունների դասակարգումը և իրավական ռեժիմը:
61. Տարածքային ծով և հարող գոտի: Հասկացությունը և իրավական ռեժիմը:
62. Բաց ծովի իրավական ռեժիմը: Բաց ծովի ազատություններ:
63. Բացառիկ տնտեսական գոտու և մայրցամաքային ելուստի իրավական ռեժիմը:
64. Միջազգային նեղուցների և ջրանցքների իրավական ռեժիմը:
65. Միջազգային օդային իրավունքի հասկացությունը, աղբյուրները և սկզբունքները:
66. Միջազգային օդային հաղորդակցությունների իրավական կարգավորումը: <<Օդի ազատություններ>>:
67. Տարածքի տեսակները միջազգային իրավունքում:
68. Պետական տարածքի կազմը և իրավական ռեժիմը: Դելիմիտացիա և դեմարկացիա:
69. Տարածքային փոփոխությունների իրավական հիմքերը:
70. Միջազգային տիեզերական իրավունքի հասկացությունը և աղբյուրները:
71. Միջազգային տիեզերական իրավունքի հիմնական սկզբունքները:
72. Տիեզերական տարածության և երկնային մարմինների իրավական ռեժիմը:
73. Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման միջոցները: Միջազգային վեճ և վիճելի իրավիճակ:
74. Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման հաշտեցման ընթացակարգը:
75. Միջազգային վեճերի դատական ընթացակարգը: Միջազգային արբիտրաժ:
76. Միջազգային մարդասիրական իրավունքի հասկացությունը և աղբյուրները:
77. Զինված ընդհարումների տեսակները:
78. Զինված ընդհարումների մասնակիցների իրավական վիճակը:
79. Մարդու իրավունքների պաշտպանությունը զինված ընդհարումների ժամանակ:
80. Միջազգային անվտանգության իրավունքի հասկացությունը և սկզբունքները:
81. Համընդհանուր անվտանգության համակարգի հասկացությունը և էությունը:
82. Տարածաշրջանային անվտանգության համակարգեր:
83. Մարդու իրավունքների բնագավառում պետությունների համագործակցությունը:
84. Միջազգային հանցավորության դեմ պայքարի հասկացությունը և ձևերը:
85. Քրեական գործերով իրավական օգնության տեսակները:
86. Քաղաքացիության միջազգային-իրավական հիմնահարցերը:
87. Շրջակա միջավայրի միջազգային-իրավական պաշտպանությունը:
88. Շրջակա միջավայրի միջազգային-իրավական պաշտպանության սկզբունքները: